ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – ՄԱՅԻՍ, 2021թ.

WORLD BANK GROUP
Macroeconomics, Trade & Investment

- *Չնայած «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի թվի աճին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (այսուհետ՝ ՆՏՆԺՀ) մարտին տնտեսությունն արձանագրեց 3.8 տոկոսի կայուն աճ:*
- *Պատվաստումների թիվն աճեց, բայց այն դեռևս ցածր է. հաշվարկների համաձայն, մայիսի 7-ի դրությամբ պատվաստվել է բնակչության 0.35 տոկոսը:*
- *Գնաճը շարունակեց աճել և ապրիլին կազմեց 6.2 տոկոս՝ հուշելով ՀՀ ԿԲ-ին 0.5 տոկոսային կետով բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը:*
- *Ներքին ակտիվության աճի և արտաքին կայուն բարձր պահանջարկի պայմաններում բարելավվեց արտաքին առևտուրը:*
- *Չնայած եկամուտների լավ կատարողականին՝ ծախսերի աճի արդյունքում մարտին բյուջեի դեֆիցիտն ավելացավ:*
- *Բանկային հատվածում մարտին միջնորդական ծառայությունների ակտիվության տեմպը մնաց ցածր:*

Փետրվարին ՆՏՆԺՀ 5.3 տոկոսով կրճատումից հետո մարտին ՆՏՆԺՀ տնտեսությունն արձանագրեց 3.8 տոկոսի կայուն աճ: 2020թ. փետրվարից ի վեր առաջին անգամ տնտեսական ակտիվության ցուցիչը (ՏԱՑ) գրանցեց դրական աճ ՆՏՆԺՀ՝ մասամբ պայմանավորված այն բազային էֆեկտով, որ 2020թ. մարտին ներդրվեցին ՔՈՎԻԴ-ի հետ կապված սահմանափակումները: Աճն ապահոված ոլորտների շարքում առաջատար են շինարարությունը (ՆՏՆԺՀ 11 տոկոսի աճ), հանքարդյունաբերությունը (ՆՏՆԺՀ 19 տոկոս) և արդյունաբերությունը (ՆՏՆԺՀ 3.8 տոկոս): Ընդ որում, թեև ՆՏՆԺՀ մարտին մշակվող արդյունաբերության ոլորտում պահպանվեց կրճատման միտումը (4 տոկոսով), սակայն այն բարելավվեց փետրվարի համեմատ, երբ ՆՏՆԺՀ արձանագրվեց 14 տոկոսով կրճատում: Ծառայությունների ոլորտը, որն ամենաշատը տուժեց համավարակի ընթացքում, աննշան (ՆՏՆԺՀ 1 տոկոսից պակաս) աճ գրանցեց: Կուտակային արտահայտությամբ ՏԱՑ-ը շարունակում է մնալ բացասական աճի տիրույթում՝ 2021թ. 1-ին եռամսյակում ՆՏՆԺՀ նվազելով 2 տոկոսով: Ինչ վերաբերում է պահանջարկին, ապա սպառման աճին նպաստեցին աշխատավարձերի վերականգնումն ու օտարերկրյա տրանսֆերտների կայուն ներհոսքը, իսկ արտահանման վերականգնման ավելի բարձր տեմպը վկայեց զուտ արտահանման կրճատման տեմպի թուլացման մասին:

Չնայած համավարակի փոփոխական ինտենսիվությանը՝ թվում է, որ տնտեսության վերականգնումը շարունակվում է: «ՔՈՎԻԴ-19»-ով վարակման դեպքերի թիվը կտրուկ աճեց Մարտին և ապրիլի սկզբին, զուգորդվելով թեստերի օրական դրական պատասխանների տոկոսի աճով, երբ փետրվարի վերջի միջինում 5.5 տոկոսի համեմատ ապրիլի կեսերին գրանցվեց 21 տոկոս առավելագույն մակարդակ,: Այնուհետև վարակի ինտենսիվությունը թուլացավ և նոր դեպքերի թիվը ավելի քան կիսվեց ապրիլի սկզբին գրանցված առավելագույն թվից, իսկ թեստերի դրական պատասխանների թիվը մայիսի առաջին շաբաթում ընկավ՝ հասնելով 12 տոկոս մակարդակին: Երրորդ ալիքի ժամանակ լրացուցիչ սահմանափակումներ չմտցվեցին և ըստ այդմ շարժունակությունը որևէ ազդեցության չենթարկվեց: Այսպես, նախաքովիդյան մակարդակների համեմատ տվյալ ժամանակաշրջանում Երևանում արձանագրվեց շարժունակության 90 տոկոսից բարձր մակարդակ: Պատվաստումների տեմպը մինչ օրս դանդաղ է. մայիսի 7-ի դրությամբ պատվաստվել է բնակչության ընդամենը 0.35 տոկոսը (10,281 մարդ): Մայիսի 10-ի դրությամբ Հայաստանում ստացված պատվաստանյութի ընդհանուր թիվը 153,000 է:

Գնաճի մակարդակը շարունակեց բարձրանալ ապրիլին՝ առաջ բերելով վերաֆինանսավորման տոկոսադրույքն է՛լ ավելի բարձրացնելու անհրաժեշտությունը: ՆՏՆԺՀ գնաճը հասավ 6.2 տոկոս մակարդակին՝ խախտելով ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) նպատակային միջակայքը: Ապրիլին կտրուկ աճեցին պարենի և ոչ ալկոհոլային խմիչքների գները (8.3 տոկոս ՆՏՆԺՀ), ինչը հետևանք էր պարենի միջազգային գների աճի և դրամի արժեզրկման: Սպառողական այլ խմբերի գները ևս բարձրացան ապրիլին, հատկապես տրանսպորտում (ՆՏՆԺՀ 11 տոկոս): Հաշվի առնելով շարունակվող արտաքին գնաճային ճնշումները և ներքին աղբյուրներից առաջացող ճնշումները՝ մայիսի սկզբին ՀՀ ԿԲ-ն 0.5 տոկոսային կետով բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը: 2019թ. հունվարից ի վեր վերաֆինանսավորման տոկոսադրույքը հասել է իր ամենաբարձր մակարդակին՝ 6 տոկոս:

Ապրանքների արտաքին առևտուրը ՆՏՆԺՀ մարտին աճեց 11 տոկոսով, ընդ որում, աճ է արձանագրվել և՛ արտահանման, և՛ ներկրման մասով: Ներքին պահանջարկի շնորհիվ ՆՏՆԺՀ ներկրումն աճեց 5 տոկոսով, ընդ որում, կտրուկ մեծացավ մեքենա-սարքավորումների ներկրման ծավալը (ՆՏՆԺՀ 26 տոկոսով): ՆՏՆԺՀ արտահանումը մեծացավ 22 տոկոսով, որի երկու երրորդը բաժին է ընկնում պղնձի արտահանմանը, որն աճեց և՛ ծավալային, և՛ գնային առումով: 1-ին եռամսյակում արտահանումը կուտակային առումով աճեց 3.4 տոկոսով, մինչդեռ ներկրումը նվազեց 8.7 տոկոսով՝ վկայելով առևտրային հաշվեկշռի զգալի (23 տոկոսով) բարելավման մասին:

Ապրիլի կեսերից թուլացել է դրամի վրա ճնշումը: Մինչև մայիսի 6-ը, նախորդ ամսվա համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվեց 2.5 տոկոսով: Սա արտացոլեց ավելի փոքր առևտրային դեֆիցիտը, ինչպես նաև երկիր ժամանող զբոսաշրջիկների թվի ինչ-որ չափով վերականգնումն ու օտարերկրյա տրանսֆերտների զուտ ներհոսքի աճը (ՆՏՆԺՀ մարտին 2.5 անգամ): Մարտին գրանցված անկումից հետո ապրիլին միջազգային պահուստների մակարդակը մնաց կայուն (3 մլրդ ԱՄՆ դոլար)՝ ապահովելով 7 ամսվա ներկրումային ծածկույթ:

Մարտին բյուջեն գրանցեց 74 մլրդ դրամ դեֆիցիտ, մինչդեռ փետրվարին այն կազմում էր 47 մլրդ դրամ: Արդյունքում, 2021թ. 1-ին եռամսյակում դեֆիցիտը հասավ 55 մլրդ դրամի մակարդակին (կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.9 տոկոս): Մարտին դեֆիցիտի բարձր մակարդակը պայմանավորված էր ծախսերի շեշտակի աճով (ՆՏՆԺՀ 53 տոկոս): Գործառնական դասակարգման առումով շեշտակի աճեցին պաշտպանության ծախսերը (ավելի քան եռապատիկ աճ) և սոցիալական ծախսերը (ՆՏՆԺՀ 79 տոկոսով): Տնտեսագիտական դասակարգմամբ, կապիտալ ծախսերը համարյա ութնապատկվեցին: ՆՏՆԺՀ մարտին ընդհանուր եկամուտներն աճեցին 2 տոկոսով, երբ ԱԱՀ-ի, մաքսատուրքերի և բնապահպանական հարկերի կայուն հավաքագրման շնորհիվ չեզոքացվեց եկամտային հարկի թույլ կատարողականը:

Բանկային ոլորտում միջնորդական ծառայությունների ծավալը ցածր էր, մինչդեռ հուսալիության ցուցանիշները մնացին կայուն: Վարկերը (ճշգրտված փոխարժեքային փոփոխություններով) ՆՏՆԺՀ մնացին անփոփոխ, իսկ ավանդների ծավալը փոքր-ինչ վերականգնվեց (ՆՏՆԺՀ 1 տոկոսով): Չաշխատող վարկերի աճի միտումը հակադարձվեց մարտին, մինչդեռ շահութաբերությունը ընկավ: Կապիտալի համարժեքության ցուցանիշը մնաց 12 տոկոսի նվազագույն շեմից շատ ավելի բարձր մակարդակում:

Կազմեց՝ Արմինե Մանուկյան, տնտեսագետ, amanookian@worldbank.org

Գծապատկեր 1. Տնտեսական վերականգնման տեմպն աճեց մարտին
(Տնտեսական ակտիվության ցուցիչ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Գնաճը շարունակեց աճել՝ է՛լ ավելի հեռանալով ՀՀ ԿԲ-ի նպատակային վերին միջակայքից
(ՍԳՑ գնաճ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Ներկրումը և արտահանումն աճեցին մարտին, իսկ առևտրային դեֆիցիտը կրճատվեց
(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 4. Ծախսերի աճի արդյունքում բյուջեն գրանցեց դեֆիցիտ 1-ին եռամսյակում
(մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ՖՆ

Գծապատկեր 3. Միջազգային պահուստները կայուն էին ապրիլին և ապահովեցին 7 ամսվա ներկրումային ծածկույթ
(մլն ԱՄՆ դոլար) (ամիսներ)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Ապրիլի կեսերից սկսած ՀՀ դրամի վրա ճնշումը թուլացել է
(ցուցիչ, 2020թ. մարտի 2=100)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ